

չարունակեց կարգալ զանոնք յամառօրէն եւ կրցաւ օգնութեամբ Ներսէս վարդապետին խելամուտ ըլլալ արտաքին գրոց իմաստասիրութեան եւ ընդունիլ ուսուցչէն վարդապետական իշխանութիւնը (Դաւր. 394—395) :

Կը յիշեմ այս տեղ նաեւ Դաւիթ եպիսկոպոսը², որ կը ներկայանայ գրչութեան արուեստի վարպետ. Խաչատուր գրիչ 1620ին ի Տանձաւէր գրած Աւետարանին մէջ կը խնդրէ յիշել «զիմ վարպետն զտէր Դաւիթ եպիսկոպոսն, որ բազում աշխատանք եւ երախտիք ունի ի վերայ մեր»³ :

Գրքերը, որոնք «իբրեւ գկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք լցեալ էին հողով եւ մոխրով» սկսան այժմ յարգ ստանալ եւ լոյս աշխարհ գալ : Եւ որովհետեւ նուազ էր անոնց թիւը, իսկ պահանջքը օր ըստ օրէ ստիպողական, ելան հրատարակ գրիչներ, անոնց թուին մէջ կը յիշուի նաեւ «աշխարհական» մը, որոնք իրենց զբաղմունք ընտրեցին ըստ պահանջին արտագրել ձեռագիրներ : Սկսեալ 1600էն հաղուադէս է տեսնել արեւելեան Հայաստան գրուած ձեռագիրներ. առաջին անգամ Մեծ Անապատի շրջանին մէջ սկիզբ կ'ըլլայ ձեռագիրներու օրինակութեան եւ կը ծագկին մեծ թուով գրիչներ. կը յիշենք հոս .

² Սա նոյն է հաւանօրէն Ղարամանէնց Դաւիթ եպիսկոպոսի հետ, զոր յիշեցինք վերագոյն էջ 30, ծան. 11) :

³ Չեռ. Իջմ. 293 :